Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին (Օրհուսի) կոնվենցիայի կողմերի VIII/8a որոշման գործողությունների պլան (Հայաստան)

Օրհուսի կոնվեցիայի կողմերի Հայաստանի առնչությամբ VIII/8a որոշման հիմնական պահանջները.

Քանի որ շահագրգիռ Կողմը դեռևս չի կատարել VII/8a որոշման 2(ա), (բ) կամ (գ) կետերի պահանջները, Կողմերի ժողովը որոշում է՝

(ա) Պահպանել իր յոթերորդ նստաշրջանում Կողմին տրված նախազգուշացումը (Ժնև, 2021 թվականի հոկտեմբերի 18-20-ը), որն ուժի մեջ է մտել 2024 թվականի հունվարի 1-ին:

(բ) Նախազգուշացումը կվերացվի 2027 թվականի հոկտեմբերի 1-ին, եթե համապատասխան Կողմը լիովին կատարել է սույն որոշման 2(ա)-(գ) կետերի պահանջները և նույն ամսաթվին տեղեկացրել է քարտուղարությանը այդ փաստի մասին՝ տրամադրելով ապացույցներ:

(գ) Խնդրել Կոմիտեին հաստատել սույն որոշման 2(ա)-(գ) կետերի հաջող կատարումը՝ վերը նշված (բ) ենթակետի նպատակների համար:

Ա. Գործողությունների պլանի պատրաստման գործընթացի նկարագրությունը
Սույն գործողությունների պլանը պատրաստել է շրջակա միջավայրի նախարարությունը՝ Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կոնվենցիայի Կողմերի համար պատրաստած տեղեկատվական ուղեցույցի հիման վրա, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://unece.org/sites/default/files/2026-04/Information_note_on_preparing_plan_of_action_April_2026_0.pdf: Գործողությունների պլանի առաջին նախագիծը պատրաստվել է ս.թ. հունիսին, շրջանառվել և քննարկվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ և նրանց ներկայացրած առաջարկությունների հիման վրա լրամշակվել է ս.թ. օգոստոսին: Պլանի երկրորդ նախագիծը ս.թ. սեպտեմբերի 4-ին հրապարակվել է շրջակա միջավայրի նախարարության կայքում (հղումը) և շահագրգիռ կողմերը ծանուցվել են 10- օրյա ժամկետում դրա վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու մասին:

B. Գործողությունների պլան Մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի ընդունում, ինչպես նաև համապատասխան իրավական ակտերի լրամշակումև ընդունում: «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և հարակից օրենքներում փոփոխություն կատարելու մասին նախագծերի մշակում և ընդունում: Դատական համակարգի ներկայացուցիչների իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացում Օրհուսի կոնվենցիայի իրականացման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի վերագործարկում:	
Recommendation: **Para. 2 (a) of decision VII/8a** **Para. 2 (b) of decision VII/8a**	In paragraph 2 (a) of decision VII/8a, the Meeting of the Parties requests the Party concerned, as a matter of urgency, to take the necessary legislative, regulatory and administrative measures to ensure that: (a) Thresholds for activities subject to an environmental impact assessment procedure, including public participation, are set in a clear manner; In paragraph 2 (b) of decision VII/8a, the Meeting of the Parties requests the Party concerned, as a matter of urgency, to take the necessary legislative, regulatory and administrative measures to ensure that: (b) Reasonable time frames that are significantly longer than those currently provided for are set for the public to consult and comment on project-related documentation;
Առաջարկվող միջոցառման (ների) համառոտ նկարագրությունը և թե	1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակում 2. Ենթաօրենսդրական ակտերի մշակում և/կամ լրամշակում և ընդունում:

ինչպես է յուրաքանչյուր միջոցառում նպաստելու առաջարկության իրականացմանը:	
Առաջարկվող միջոցառման(ների) իրականացման համար անհրաժեշտ հիմնական քայլերը, ներառյալ յուրաքանչյուր քայլի իրականացման վերջնակաժմեկտը	1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում և ընդունում, որում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ընթացակարգին ենթակա գործունեության տեսակները և շեմերը սահմանվեն հստակ ձևով՝ Օրհուսի կոնվենցիայի Հավելված 1-ին (6-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետում նշված գործունեության ցանկին) համապատասխան: - Օրենքի նախագծի վերանայված և լրամշակված տարբերակի շրջանառում - Օրենքի նախագծի ընդունում: 2. Ենթաօրենսդրական ակտեր. 1) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2294-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Կառավարության որոշման ընդունում, 2) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Կառավարության որոշման ընդունում, 3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N 643-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Կառավարության որոշման ընդունում, 4) «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի հոկտեմբերի 29-ի N 438-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» շրջակա միջավայրի նախարարի հրամանի ընդունում:
Կառավարության համապատասխան գերատեսչությունները և այլ շահագրգիռ կողմերը, որոնց ներգրավվածությունը	- Շրջակա միջավայրի նախարարություն, այդ թվում ենթակա կառույցներ («Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ և Հայիդրոմետի Օրհուս կենտրոն) - Անկախ/հրավիրված փորձագետներ (համաձայնությամբ) - Հասարակական ոլորտային կազմակերպություններ՝ աշխատանքային քննարկումներին և հանրային քննարկումներին/լսումներին մասնակցության միջոցով - Ոլորտային գիտական և գիտակրթական հաստատություններ (համաձայնությամբ)

անհրաժեշտ կլինի վերը նշված քայլերից յուրաքանչյուրը իրականացնելու համար	
Վերջնաժամկետ	2026 թվականի դեկտեմբերի 31
Recommendation: **Para. 2 (c) of decision VII/8a**	In paragraph 2 (c) of decision VII/8a, the Meeting of the Parties requests the Party concerned, as a matter of urgency, to take the necessary legislative, regulatory and administrative measures to ensure that: (a) Its legislation, including the law on non-governmental organizations and administrative procedures, complies with article 9 (2) of the Convention with regard to standing;
Առաջարկվող միջոցառման (ների) համառոտ նկարագրությունը և թե ինչպես է յուրաքանչյուր միջոցառում նպաստելու առաջարկության իրականացմանը:	«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և հարակից օրենքներում փոփոխություն կատարելու մասին նախագծերի մշակում և ընդունում:
Առաջարկվող միջոցառման(ների) իրականացման համար անհրաժեշտ հիմնական քայլերը, ներառյալ յուրաքանչյուր քայլի	«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» (մասնավորապես դրա 16-րդ հոդվածի 3-րդ մասի), «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի մշակում և ընդունում: Ըստ անհրաժեշտության այլ հարակից օրենքներում փոփոխություն կատարելու մասին նախագծերի մշակում և ընդունում:

իրականացման վերջնակաժմեկտը	
Կառավարության համապատասխան գերատեսչությունները և այլ շահագրգիռ կողմերը, որոնց ներգրավվածությունը անհրաժեշտ կլինի վերը նշված քայլերից յուրաքանչյուրը իրականացնելու համար	- Շրջակա միջավայրի նախարարություն - Արդարադատության նախարարություն - Հասարակական ոլորտային կազմակերպություններ՝ աշխատանքային քննարկումներին և հանրային քննարկումներին/լսումներին մասնակցության միջոցով - Ոլորտային գիտական և գիտակրթական հաստատություններ (համաձայնությամբ)
Վերջնաժամկետ	2027 թվականի հուլիսի 31
Recommendation: **Para. 2 (d) of decision VII/8a**	In paragraph 2 (d) of decision VII/8a, the Meeting of the Parties requests the Party concerned, as a matter of urgency, to take the necessary legislative, regulatory and administrative measures to ensure that: (b) It continues its efforts to raise awareness of the judiciary to promote implementation of domestic legislation in accordance with the Convention;
Առաջարկվող միջոցառման (ների) համառոտ նկարագրությունը և թե ինչպես է յուրաքանչյուր միջոցառում նպաստելու առաջարկության իրականացմանը:	Դատական համակարգի ներկայացուցիչների իրազեկվածության մակարդակի շարունակական բարձրացում

Առաջարկվող միջոցառման(ների) իրականացման համար անհրաժեշտ հիմնական քայլերը, ներառյալ յուրաքանչյուր քայլի իրականացման վերջնակաժմեկտը	Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց համար բնապահպանական իրավունքի, Օրհուսի կոնվենցիային և բնապահպանական այլ միջազգային համաձայնագրերի իրականացմանն առնչվող թեմաներով կրթական լրացուցիչ նյութերի և առցանց մոդուլների մշակում և վերապատրաստումների շարունակական անցկացում:
Կառավարության համապատասխան գերատեսչությունները և այլ շահագրգիռ կողմերը, որոնց ներգրավվածությունը անհրաժեշտ կլինի վերը նշված քայլերից յուրաքանչյուրը իրականացնելու համար	- Շրջակա միջավայրի նախարարութուն - Արդարադատության նախարարություն - Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ) - Արդարադատության ակադեմիա (համաձայն շրջակա միջավայրի նախարարության և «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի միջև համագործակցության մասին 2025 թվականի նոյեմբերի 14-ին կնքված փոխըմբռնման հուշագրի) - Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղ (համաձայն շրջակա միջավայրի նախարարության և Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի միջև 2026 թվականի փետրվարին կնքված փոխըմբռնման հուշագրի) - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Ա. Իսկոյանի անվան էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն (համաձայնությամբ)
Վերջնաժամկետ	2027 թվականի հուլիսի 31
Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների իրականացմանը նպաստող այլ լրացուցիչ միջոցառումներ	

Առաջարկվող միջոցառման (ների) համառոտ նկարագրությունը և թե ինչպես է յուրաքանչյուր միջոցառում նպաստելու առաջարկության իրականացմանը:	Օրհուսի կոնվենցիայի իրականացման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի վերագործարկում:
Առաջարկվող միջոցառման(ների) իրականացման համար անհրաժեշտ հիմնական քայլերը, ներառյալ յուրաքանչյուր քայլի իրականացման վերջնակաժմեկտը	ՀՀ վարչապետի միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու և ՀՀ վարչապետի 2006 թվականի հոկտեմբերի 16-ի n 774-ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին 2011 թվականի նոյեմբերի 25-ի N1122-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման նախագծի մշակում և Օրհուսի կոնվենցիայից բխող՝ ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ գործողությունների համակարգման միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, դրա կազմի և աշխատակարգի մասին նոր իրավական ակտի նախագծի մշակում և հաստատում:
Կառավարության համապատասխան գերատեսչությունները և այլ շահագրգիռ կողմերը, որոնց ներգրավվածությունը անհրաժեշտ կլինի վերը նշված քայլերից յուրաքանչյուրը իրականացնելու համար	Շրջակա միջավայրի նախարարութուն
Վերջնաժամկետ	2027 թվականի հուլիսի 31